ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ծնվել է 1947թ., Երևանում: Ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո աշխատանքի է անցել ՆԳ համակարգում՝ շարքային ոստիկանից հասնելով մինչև նախարարի պաշտոնի: 1979թ. ավարտել է ԽՍՀՄ ներքին գործերի ակադեմիան: 1982 թվականից մինչև 1995թ. ղեկավարել է Նաիրիի (1982-1984), Երևանի Լենինյան (այժմ՝ Շենգավիթի) շրջանների (1984-1989) ՆԳ բաժինները: 1989-1995թթ. եղել է ՀՀ ՆԳ Երևանի վարչության պետի տեղակալը, հետո՝ վարչության պետը, նշանակվել է ՆԳ փոխնախարար: 1993թ. ստացել է միլիցիայի գեներալ-մայորի կոչում: 1995-1996թթ. եղել է Սյունիք-Զանգեզուր պետական ծրագիրն իրականացնող պետնախարար, Վազգեն Սարգսյանի ուժային ու պաշտպանական կառույցների համակարգողը, պետնախարարի տեղակալը, ավելի ուշ՝ աշխատակազմի ղեկավարը: 1995թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր, 1996-1998թթ. նշանակվել է Սյունիքի մարզպետ: 1998թ. մայիսին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Երևանի քաղաքապետ: 1998թ. ընտրվել է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ: 1999թ. հունիսից մինչև հոկտեմբեր եղել է ՀՀ ՆԳ նախարարը: